

**«ԱՅ ԷՖ ՓԻ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2018թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

**ԵՐԵՎԱՆ
Մարտ 2019**

Բովանդակություն

	Էջ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

Այ ԷՖ ՓԻ ՍՊԸ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծանոթ.	2018 ‘000 դրամ	2017 ‘000 դրամ
Հասույթ	5	18,962	13,179
Վաճառքի ինքնարժեք	6	(9,593)	(8,032)
Համախառն շահույթ		9,369	5,147
Գովազդային ծախսեր		(61)	(236)
Վարչական ծախսեր	7	(2,575)	(1,802)
Տոկոսային եկամուտ		188	16
Այլ եկամուտներ		115	-
Գեթիտորական պարտքերի անհավաքագրելիության ծախսեր		(1,630)	-
Անհատույց տրված			(130)
Շահույթ մինչև հարկումը		5,406	2,995
Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս)	8	(1,274)	(619)
Տարվա շահույթ		<u>4,132</u>	<u>5,371</u>

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 12-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Այ Էֆ Փի ՍՊԸ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծանոթ.	2018 ‘000 դրամ	2017 ‘000 դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	2,565	2,095
		<u>2,565</u>	<u>2,095</u>
Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր		73	143
Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայություններից	13	1,534	2,562
Դրամական միջոցներ և դրամական միջոցների համարժեքներ	10	7,943	3,471
		<u>9,550</u>	<u>6,176</u>
Ընդամենը ակտիվներ		<u>12,115</u>	<u>8,271</u>
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	11	1,500	1,500
Կուտակված շահույթ/վնաս		7,672	3,540
		<u>9,172</u>	<u>50,40</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	52	100
		<u>52</u>	<u>100</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված փոխառություններ	15	1,700	1,030
Ստացված կանխավճարներ			1,020
Շահութահարկ	9	901	212
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	290	869
		<u>2,891</u>	<u>3,131</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>12,115</u>	<u>8,271</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2019թ. մարտի 29-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Վաղարշակ Մարգարյան
Տնօրեն



(Handwritten signature in blue ink)

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 12-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Այ ԷՖ ՓԻ ՍՊԸ

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Կանոնադրական կապիտալ ‘000 դրամ	Զբաղիված շահույթ ‘000 դրամ	Ընդամենը ‘000 դրամ
Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	1,500	1,164	2,664
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար			
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	<u>2,376</u>	<u>2,376</u>
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	1,500	3,540	5,040
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար			
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		<u>4,132</u>	<u>4,132</u>
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	1,500	7,672	9,172

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 12-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Այ ԷՖ ՓԻ ՍՊԸ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծանոթ.	2018 ‘000 դրամ	2017 ‘000 դրամ
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ		21,163	16,465
Տոկոսային եկամուտ		188	16
Այլ մուտքեր		116	
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից		(8,523)	(8,175)
Վճարումներ գնումների դիմաց		(4,891)	(4,046)
Վճարումներ բյուջե		(3,618)	(3,360)
Շահութահարկ		(633)	(308)
Այլ ելքեր			(130)
		<u>3,802</u>	<u>462</u>
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Փոխառությունների ստացումից		670	(2,150)
Դրամական միջոցների և դրամական միջոցների համարժեքների գուտ հոսք		4,472	(1,688)
Դրամական միջոցներ և դրամական միջոցների համարժեքներ տարվա սկզբի դրությամբ		<u>3,471</u>	<u>5,159</u>
Դրամական միջոցներ և դրամական միջոցների համարժեքներ տարվա վերջի դրությամբ	10	<u>7,943</u>	<u>3,471</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 12-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Այ Էֆ Փի ՍՊԸ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն և ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական ծանոթագրություններ 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

1. Ընդհանուր տեղեկատվություն

Այ Էֆ Փի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Ընկերությունը) Հայաստանում գրանցված ընկերություն է: Ընկերության իրավաբանական հասցեն և գործունեության հիմնական վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Նիկոլ Դումանի 53-34: **Այ Էֆ Փի ՍՊԸ-ի** հիմնական գործունեությունը աուդիտորական, հաշվապահական, հարկային և տնտեսագիտական ծառայությունների մատուցումն է: Ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքում աուդիտորական գործունեությունը իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2014 թվականի մարտի 27-ին տրված N ԱԾ 100 լիցենզիայի հիման վրա:

Ընկերության հիմնադիրներն են ՀՀ քաղաքացիներ՝ Աշոտ Բարսեղյանը, Քրիստինե Հովհաննիսյանը, Ռոզա Հարությունյանը: Կանոնադրական կապիտալը բաշխված է նրանց միջև հավասար մասերի, յուրաքանչյուրին մեկ երրորդի չափով:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության աշխատողների քանակը կազմել է 8 աշխատող (2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7 աշխատող):

2. Պատրաստման հիմունքներ և հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումներ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի* համաձայն: Դրանք ներկայացվում են Հայաստանի Հանրապետության արժույթի միավորներով հազարների ճշտությամբ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Հասույթի ճանաչում

Հասույթն իրենից ներկայացնում է տարվա ընթացքում մատուցված մասնագիտական ծառայությունների գծով ստացվելիք հատուցման իրական արժեքը, ներառում է հաճախորդների համար իրականացվող աշխատանքների ժամանակ կրած փոխհատուցվող ծախսերը, առանց գեղչերի և անուղակի հարկերի:

Երբ գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա՝ պայմանով, որ հատուցում ստանալու իրավունքը ձեռք է բերվել ծառայությունների մատուցման արդյունքում:

Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը ներկայացնում է վճարման ենթակա ընթացիկ հարկի և հետաձգված հարկի հանրագումարը:

Վճարման ենթակա ընթացիկ հարկը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկը ճանաչվում է ակտիվների և պարտավորությունների ֆինանսական հաշվետվություններում ճանաչված հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև տարբերությունների գծով (հայտնի են որպես ժամանակավոր տարբերություններ): Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք ակնկալվում է, որ ապագայում կավելացնեն հարկվող շահույթը: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք ակնկալվում է, որ ապագայում կնվազեցնեն հարկվող շահույթը, ինչպես նաև՝ ցանկացած չօգտագործված հարկային կորուստների կամ չօգտագործած հարկային գեղչերի գծով: Հետաձգված հարկային ակտիվները չափվում են ամենաբարձր գումարով, որը, ընթացիկ կամ գնահատված ապագա հարկվող շահույթի հիման վրա, ավելի շատ հավանական է, քան՝ ոչ, որ կփոխհատուցվի:

Հետաձգված հարկային ակտիվների գուտ հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշգրտվում է ապագա հարկվող շահույթների ընթացիկ գնահատականն արտացոլելու նպատակով: Ցանկացած ճշգրտում ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հետաձգված հարկը հաշվարկվում է հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում են, որ կկիրառվեն այն ժամանակաշրջանների հարկվող շահույթի (հարկային վնասի) նկատմամբ, որոնց ընթացքում ակնկալվում է, որ հետաձգված հարկային ակտիվը կիրացվի կամ հետաձգված հարկային պարտավորությունը կմարվի կիրառելով այն հարկային դրույքները, որոնք ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջին:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորները չափվում են իրենց սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվների սկզբնական արժեքը (ինքնարժեքը)՝ հանած մնացորդային արժեքը, դրանց գնահատված օգտակար ծառայության ընթացքում բաշխելու միջոցով՝ կիրառելով գծային մեթոդը: Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման համար կիրառվում են ստորև նշված տարեկան դրույքաչափերը՝

Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել մաշվածության հաշվարկման դրույքաչափերի, ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա այդ ակտիվի մաշվածությունը վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը ֆիզիկական սուբստանցիայից գուրկ որոշելի ոչ դրամային ակտիվ է: Այն ամորտիզացվում է իրեն գնահատված օգտակար ծառայության ընթացքում, կիրառելով գծային մեթոդը: Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել ամորտիզացիայի հաշվարկման դրույքաչափերի, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա ամորտիզացիան վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

Ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները վերլուծվում են՝ որոշելու համար արդյոք առկա է որևէ հայտանիշ, որ այդ ակտիվներն ունեցել են արժեզրկումից կորուստ: Եթե կա հնարավոր արժեզրկման որևէ հայտանիշ, ապա ցանկացած ազդեցության ենթարկված ակտիվի (կամ համապատասխան ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարը գնահատվում է և համեմատվում դրա հաշվեկշռային արժեքի հետ: Եթե ակտիվի գնահատված փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա գնահատված փոխհատուցվող գումարը և արժեզրկումից կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Նմանապես, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է պաշարների արժեզրկված լինելը՝ պաշարի յուրաքանչյուր հոդվածի (կամ համանման հոդվածների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելու միջոցով: Եթե պաշարի հոդվածը (կամ համանման հոդվածների խումբը) արժեզրկվել է, դրա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ կապակցված ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը (պաշարների դեպքում, վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումներ), սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի (կապակցված ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորուստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Հիմնական վաճառքները կատարվում են վճարման սովորական պայմանների հիմունքով, և դեբիտորական պարտքերը տոկոսակիր չեն: Երբ պարտքը հետաձգվում է վճարման սովորական պայմաններով նախատեսված ժամկետներից, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները վերլուծվում են՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ գումարները փոխհատուցելի չեն: Եթե գումարները փոխհատուցելի չեն, արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Առևտրական կրեդիտորական պարտքեր

Առևտրական կրեդիտորական պարտքերը վճարման սովորական պայմանների հիմունքով պարտականություններ են և տոկոսակիր չեն: Արտարժույթով արտահայտված առևտրական կրեդիտորական պարտքերը վերահաշվարկվում են ՀՀ դրամով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Արտարժույթի փոխարժեքային օգուտները կամ վնասները ներառվում են այլ օգուտներում կամ վնասներում:

Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումների պարտականությունների գծով պարտավորությունները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

3. Ծահարաժնի վճարման սահմանափակում

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել ընկերության մասնակիցների միջև իր շահույթի բաշխման մասին կամ վճարել ընկերության մասնակիցներին շահույթ, եթե որոշման ընդունման պահին ընկերության գուտ ակտիվների արժեքը փոքր է նրա կանոնադրական կապիտալից և պահուստային ֆոնդից կամ այդ չափից փոքր կդառնա նման որոշման ընդունման արդյունքում:

4. Հիմնական միջոցներ

	Տրանսպորտային միջոցներ	Գրասենյակային և տնտեսական գույք	‘000 դրամ Ընդամենը
<i>Մկզբնական արժեք</i>			
Առ 01 հունվարի 2017թ.	1,900	216	2,116
Ավելացումներ	380		380
Նվազեցումներ		-	0
Առ 31 դեկտեմբերի 2017թ.	2,280	216	2,496
Ավելացումներ	268	1,642	1,910
Նվազեցումներ	-	-	0
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	2,548	1,858	4,406
<i>Կուտակված մաշվածություն</i>			
Առ 01 հունվարի 2017թ.			0
Ավելացումներ	390	11	401
Նվազեցումներ			0
Առ 31 դեկտեմբերի 2017թ.	390	11	401
Ավելացումներ	344	1,096	1,440
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	734	1,107	1,841
<i>Ընթացիկ արժեք</i>			
Առ 01 հունվարի 2017թ.	1,900	216	2,116
Առ 31 դեկտեմբերի 2017թ.	1,890	205	2,095
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	<u>1,814</u>	<u>751</u>	<u>2,565</u>

5. Հասույթ

	2018 ‘000 դրամ	2017 ‘000 դրամ
Առդիտորական ծառայությունների իրականացումից	11,212	5,329
Հաշվապահական ծառայությունների իրականացումից	7,400	7,500
Այլ ծառայությունների իրականացումից	350	350
	<u>18,962</u>	<u>13,179</u>

6. Վաճառքի ինքնարժեք

	2018 ‘000 դրամ	2017 ‘000 դրամ
Աշխատակազմի գծով ծախսեր	5,860	6,417
Գործընկերության և ներկայացուցչական ծախսեր	1,912	637
Մաշվածության գծով ծախսեր	1,096	11
Կադրերի վերապատրաստման ծախսեր	475	717
Լիցենզիայի գծով	250	250
	<u>9,593</u>	<u>8,032</u>

7. Վարչական ծախսեր

	2018 ‘000 դրամ	2017 ‘000 դրամ
Աշխատակազմի գծով ծախսեր	956	963
Մաշվածության գծով ծախս	390	344
Կայքի պատրաստում	500	-
Այլ վարչական ծախսեր	729	495
	<u>2,575</u>	<u>1,802</u>

8. Շահութահարկի գծով ծախս

	2018 ‘000 դրամ	2017 ‘000 դրամ
Հետաձգված հարկ	48	(100)
Ընթացիկ հարկ	(1,322)	(519)
	<u>(1,274)</u>	<u>(619)</u>

Շահութահարկի գծով ծախսը հաշվարկվում է տարվա գնահատված հարկվող շահույթի 20 տոկոսի չափով (2017 թվականին՝ 20 տոկոս):

9. Շահութահարկ

Հետաձգված հարկային ակտիվները շահութահարկի գծով ակնկալվող ապագա հատուցումների հարկային հետևանքներն են, որնք առաջանում են հիմնական միջոցների հարկային և հաշվապահական բազաների տարբերությունից:

Ստորև նշվածները Ընկերության կողմից ճանաչված հետաձգված հարկային պարտավորություններն (ակտիվներն) են՝

	Ժամանակավոր տարբերությունների գծով ‘000 դրամ
01 հունվարի 2017թ.	-
Հետաձգված հարկի գծով ծախս	100
01 հունվարի 2018թ.	<u>100</u>
Հետաձգված հարկի գծով հատուցում	(48)
31 դեկտեմբերի 2018թ.	<u>52</u>
	Ընթացիկ պարտավորություն
	‘000 դրամ
01 հունվարի 2017թ.	-
Ընթացիկ տարվա շահութահարկ Վճարվել է	519 (308)
01 հունվարի 2018թ.	<u>212</u>
Ընթացիկ տարվա շահութահարկ Վճարվել է	1,332 (633)
31 դեկտեմբերի 2018թ.	<u>901</u>

10. Դրամական միջոցներ և դրամական միջոցների համարժեքներ

	2018 ‘000 դրամ	2017 ‘000 դրամ
Դրամարկղում դրամական միջոցներ	6	115
Բանկում դրամական միջոցներ	1,749	3,356
Ավանդ	6,000	-
հաշվեգրված տոկոս	188	-
	<u>7,943</u>	<u>3,471</u>

11. Կանոնադրական կապիտալ

2018 և 2017 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,500 հազար դրամ մնացորդները ներառում են 500.0 հազար դրամ անվանական արժեքով 3 թողարկված բաժնեմասեր, որոնք ամբողջությամբ վճարված են:

12. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2018 ‘000 դրամ	2017 ‘000 դրամ
Պարտավորություններ բյուջեին	290	516
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով		353
	<u>290</u>	<u>869</u>

13. Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունից

	2018 ‘000 դրամ	2017 ‘000 դրամ
Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունից	2,400	2,100
Կրված կանխավճարներ	764	462
Անհավաքագրելիության պահուստ	(1,630)	-
	<u>1,534</u>	<u>2,562</u>

14. Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով՝ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

2018թ. դեկտեմբերի 31-ի և այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չկան:

15. Կապակցված կողմի գործարքներ

Կապակցված կողմ հանդիսացող անձանցից ստացել են փոխառություններ հետևյալ կերպ՝

	Ստացված փոխառություններ		Կապակցված կողմից Ընկերությանը տրված փոխառությունների գումարները տարվա վերջի դրությամբ	
	2018 ‘000 դրամ	2017 ‘000 դրամ	2018 ‘000 դրամ	2017 ‘000 դրամ
Մասնակից	(1,030)	(2,150)	-	1,030
Տնօրեն	1,700		1,700	

Տնօրենի և առանցքային կառավարչական անձնակազմի այլ անդամների ընդհանուր վարձատրությունը (ներառյալ աշխատավարձերը և այլ հատուցումները) 2018 թվականին կազմում էր 4,503 հազ.դրամ (2017 թվականին՝ 4,264):